ՆՈՐ-ԴԱՐ

№ 220 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 29 Դեկտեմբերի 1888 Հինգշաբթի 29 Դեկտեմբերի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 220

Տարեկան 10 րուբլի, վեց ամսվա՝ 6 րուբլի, երեք ամսվա՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր. 50 կ., Հասով՝ 5 կոպէկ։
Բաժանորդագրութիւնները միմիայն խմբագրատանը։

Խմբագրութիւան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տոն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն տեսակ։ Յայտարարութիւնների գնաին 2 կ., տեսկամների համար կրկնապատիկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱ ԹԵՐԹ

Թիֆլիսում

ԱՌԱՋԻԿԱՑ 1889 ԹՈՒԱԿԱՆԻՆ

(Վեցերորդ տարի)

Կը հրատարակուի նոյն ձեւով և ծրագրով

Խմբագրութիւնը կ'ստանայ և տեղական հեռագիրները

Տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, Հասով՝ 5 կոպ.

Եւրոպայի, Թիւրքիայի, Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 30 ֆրանկ։

Բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն։

Թիֆլիսում բաժանորդ են գրւում Տիկին «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

Խմբագրատունը գտնւում է Բարօնսկայա փողոցում, պօստ-հեռագրատան դէմ, տուն № 12.

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, въ Редакцію еженедѣльной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

Խմբագիր-հրատարակիչ՝ ՍԱՆԴՈՒԱՐ ՍԱՆԴՈՒԱՐԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Քրօնիկոն. — Լուրեր։ Նամակ խմբագրին։ Բաց նամակ։

Թղթակցութիւններ. — Նոր-Նախիջևան։

Քաղաքական. — Քաղաքական լուրեր։

Խառն լուրեր։

«Նոր-Դար»-ի պատասխանները։

Յայտարարութիւններ։

ՔՐՕՆԻԿՈՆ

Երեքշաբթի, 27-ին դեկտեմբերի, երկրիս կառավարչապետ իշխան Դօնդուկով-Կօրսակովի մօտ լինելոյք կարեւոր պալատի ընդարձակ սրահներն և պահլնճների փառաւոր յուսատորուած էին և գարդարուած բնաիւր բոյսերով։ Քաղաքիս արիստօկրատիան և բարձրաստիճան ծառայողները և զինուորականները իրենց ամուսիններով և դստերներով հրաւիրուած էին ընդոյքին։ Մուտիկը անընդհատ հնչում էր և ուրախ հիւրերը պարում էին մինչև ժամը 4-ը առաւօտեան դէմ, հապա ցրուեցան։

—

Սոյն համարում հրատարակում ենք մի խումբ երիտասարդների կողմից ինժինէր-մեխանիկ պ. Ա. Բարեանի Թերթիս խմբագրին ուղղած նամակը։ Այդ նամակը մի բողոք է տեղական երկու հայոց Թերթի դէմ։ Հրատարակելով այդ մի քանի տող բողոքը մենք կատարում ենք երիտասարդների քաղցր կրկնած խնդիրքը, Թէպէտև այդ բողոքի ձևի հետ համաձայն չենք։

Այդ երկու Թերթերը կարող են «Նոր-Դար»-ի բարեկամը չլինել կամ նրա Թշնամին, ինչպէս որ եղել են։ Ոչնանք կարող են հայհոյել «Նոր-Դար»-ին և դրանով նրանց դարդակութիւնը մերկացնել, ինչպէս որ ազդութիւնամբ արել են և անում են, բայց «Նոր-Դար»-ը չի կարող նրա ուղղութիւնից չեղուել և անարդարու-

Թեամբ վերաբերուել դէպի Թշնամի Թերթերը։

Ընդհակառակն Թոյլ Թշնամիներին դեռ պէտք է ներողամտութեամբ վերաբերուել։

Մեր այս տեսակէտից նայելով, պիտի ասենք, որ երիտասարդները իրենց բողոքը գրելով չպէտք է երկու Թերթին էլ մէկ գծի վրայ գնէին, այլ պէտք է նախ ցոյց տային, Թէ ինչ բանից է սկսուել դրանց մէջ վէճը. յետոյ նրը դրանցից սկսեց հայհոյել և ո՞րն էր հայհոյանքին պատասխանողը...

Դրանք նշանաւոր կէտերն են այդտեղ։ Շատ էլ կուլ չես ուզում, եթէ մէկը քեզ հայհոյում է, լաւ է, որ համբերութիւն ունենաս և հեռանաս նրանից, երբ տեսաը, որ քեզ հայհոյողը մի լօթի է, բայց պատահում է, որ համբերութիւնդ հատնում է, մանաւանդ որ մի առանձին կրթութիւն էլ չունես, այն ժամանակ հայհոյանքին աւելի մեծ հայհոյանքով ես պատասխանում։ Կարելի՞ է մերթ սկսողի և պատասխանողի վարմունքը, արարքը մէկ չափով չափել։ Ո՛չ, այդ արդարութիւն չէր լինիլ։ Այստեղ վերջացնում ենք այդ մասին մեր խօսքը, որովհետև չիշած Թերթերի կուռի մէջ մենք չենք մտել և չենք էլ ուզում մտնել։

«Նոր-Դար»-ին ուղղած անհեթեթ և վնասոցային հայհոյանքներին մենք չենք պատասխանում. իսկ ինչ որ ասելիք ունենք այժմս չենք ասում, որովհետև «բաժանորդագրութեան պաշտօ» վրայ Թողնում ենք արչաւելու մեխանեակ մեզ դէմ մրցող Թերթին։ Երբ այդ արշաւանքի ժամանակը—քիչ ժամանակ է մնացել—անցած կը լինի, այն ժամանակ երևի կը տեսնենք, Թէ ովտեղ են ապրում մամուլի պարագլուխները և ինչով են սնւում։

—

ԳԵՕՐԻՍԻՑ. — Անցեալները սաստիկ բուքից խշխաշխալում երկու հայ և մի Թուրք խեղդուեցին. հայերից մէկին դեռ կիսակենդան գտան առաջին իսկ օրը, որը մինչև գիւղը բերելը հոգին աւանդեց. իսկ միւս երկուսին գտան խեղդուելուց տասն օր յետոյ։ Թուրքի գրպանում 600 րուբլի աւելի փող կար. խեղդուած Թուրքի ձին ամբողջ տասն օր իւր տերոջ դիակից չէր հեռացել. հաւատարիմ կենդանին այնքան էր լղարել ցրտից և սովից, որ կմախք էր դարձել։

Ինչպէս լսում ենք, պ. գաւառապետը Թոյլտուութիւն է խնդրել ուր հարկն է խշխաշխալում մի իմնական շինելու, որ այսպիսի աղետների ժամանակ կարելի լինի այնտեղից օգնութիւն հասցնել և պատսպարել տառապեալ Հանապազորդներին։

—

Երևանի Թեմական դպրոցի հոգաբարձութիւնից ստացանք «Ցիսնամեակ» խորագրով գիրքը, որ յիշեալ դպրոցի յիսնամեայ (1837 — 1887 Թ.) պատմութիւնն է բովանդակում իւր մէջ։ Հրատարակելով այդ ցիսնամեակը, յարգելի «Հոգաբարձութիւնը գլխաւորապէս ցանկացել է ստոյգ մի-ջոց տալ հայ ազգայիններին մօտ և մօտոյ ծանօթանալու իւր դպրանոցներից մէկի հետ և պարտաճանաչ կերպով վերաբերուելու դէպի այն սրբազան հաստատութիւնը»։ Գովելի և միանգամայն հետևելու գործ է Երևանի յարգելի հոգաբարձութեան ձեռնարկութիւնը, որ հիմնուած լինելով գրաւոր փաստերի վրայ, մեզ բաւական պարզ գաղափար է տալիս յիշեալ հաստատութեան վրայ։ Սա հաշուագիտ դիպքերից մինն է, Թէև շատ ցանկալի կը լինէր այդ սովորութեան տարածուիլը հայ հասարակութեան մէջ։ Գործի աջողութեան համար հարկաւոր է ուսումնասիրել նրան. իսկ դրա համար համարիա Թէ միակ միջոցն է այսպիսի պարզաբանող պատմութիւնների հրատարակութիւնը։ Ցանկալի էր, որ Երևանի Թեմ. դպրոցի յարգելի հոգաբարձութեան օրինակին հետևէին մեր միւս դպրոցների և ուսումնարանները։ «Ցիսնամեակը» տպուած է Մոսկուա վարդանեանի տպարանում սոյն 1888 Թ. շատ մաքուր կերպով և խնամքով։

—

ՔՈՒԹԱՑԻՍԻՑ.—Դեկտեմբերի 10-ից մինչև 13ը իմերէթը և սրա շուրջ եղած սարերը ծածկուեցան սպիտակ ձիւնի սաւանով, իսկ 13-ից յետոյ դաշտավայր տեղերումը սկսուեցան անպէտք անձրևները, այնպէս որ, ինչպէս պատմում են, մէկ գիւղից միւսը երթևեկութիւնը բոլորովին անկարելի էր. իսկ Քութայիսում հաղիւ Թէ մի օր արժանացանք առհնակներով մանկալու և միւս օրը անձրևի խստ հարուածները $^3/_4$ արշին բարձրութեամբ եկած ձիւնը բոլորովին հալեցրեց և ջուր դարձրեց։ Այդ անտանելի անձրևներից յետոյ, դեկ. 20-ից սկսուեցաւ Քութայիսում անտանելի ա ր և ե լ ե ա ն ք ա մ ի ն, որի մնասը մեծ եղաւ—բոլոր պտղատու բոյսերն ու ծառերը կոտրատեց, իսկ վայրի Թռչունները անտառներում և դաշտերում սառած ընկած էին։ Այսօր, դեկ. 23-ին այնպէս չոր է գետինը, կարծես Թէ ոչ ձիւն է եղել և ոչ անձրև։

—Գինին ու կենսական միւս մթերքները չատ Թանգացան. եթէ իմերէթ մարդը օձին ու եգիպտացորենն ուտէ ու հաց ուտելը սկսէ, վայ մեզ այն ժամանակը, ո՛վ գիտէ այս անցորեան երկրումը հացի գր. 10 կ. գառնայ։

—Նոցին կայսերական Մեծութիւնների գալստեան համար շինուած պաւիլիոնը Քութայիսի հասարակութեանը լաւ ծառայութիւն է անում, ուր լինում են պարահանդէսներ, երաժշտական երեկոները և լինելու են դեմակահանդէսներ։

—

Դեկտ. 21-ին կայացաւ Թիֆլիսի «Կենդանիների հովանաւորութեան ընկերութեան» հերթական ժողովը, ուր նախ ժողովը հանգուցեալ Լօռու-Մելիքեանի յիշատակը պատուելու համար ոտքի եկաւ։ Այնուհետև պ. նախագահը յայտնեց, որ պ. Ս. Մ. Սալիպեանն ընկերութեան անդամ է գրուել և 300 ր. վճարել, իսկ պ. Աբուլիւնեանը խոստացել է 500 րուբլի։ Այնուհետև ժողովին յայտնեցին Բաթումի պ. ոստիկանապետի խնդիրը՝ Բաթումում այդ ընկերութեան ճիւղը բանալու մասին. որոշուեց ամեն տեսակ դիւրութիւններ տալ խնդրատուին։ Որոշուեց Քաղ. խորհրդին յիշեցնել ընկ. խնդիրը՝ քաղաքիս գառնվայը փողոցներում աւազ կամ ուրիշ բան սփռելու մասին գետինը սառած ժամանակ, իսկ պ. ոստիկանապետից էլ խնդրելու, որ գետինը սառած ժամանակ Թոյլ տայ սայլերին Գօլովինսկի պրօսպեկտով անցնելու։

—

Դեկտեմբերի 18-ին Պետերբուրգի հայ հասարակութիւնը հոգեհանգիստ է կատարել հանգուցեալ կոմս Լօռու-Մելիքեանի համար։ Ներկայ են եղել բազմաթիւ բարձրաստիճան անձեր, մինիստրները և բազմաթիւ ժողովուրդ։

—

ՇՈՒՇՈՒՑ.—Ընդհանուրի խօսակցութեան առարկան մաքսախոյս ապրանքների բռնուելն է։ Մաքսատան աստիճանաւորները տասն օր շարունակ, 4—5 հարիւր զապտիեների հետ պատում էին Շուշու փողոցները։ Նրբանք գիշերը յանկարծ գալով կինթել էին խանութների դռները և յետոյ ամեն խանութ հերթով խուզարկելեցին և որքան անմաքս ապրանք գտան, բոլորն էլ խլեցին։ Ասում են, որ 100,000 րուբլուց աւելի մաքսանենգուած ապրանք կայ, որ պէտք է ազիդով վաճառուի։

—

ՄՈՋԴՈՒՐԻՑ.—Ներկայ դեկտեմբերի 11—19 սաստիկ ցրտեր եղան Մոզդուրում։ Ցուրտը հասաւ 37 աստիճանի. Թերէքը ծածկուեց $^1/_4$ արշ. հաստութեամբ սառուցով. Թառերի վրայ շատ հաւերը սառեցան, այդ նոյն պատուհասն անպաշտպան մարդկանց ևս հասաւ։ Դպրոցներում դադարեցին պարապմունքները. ամենայարմար բնակարաններում անգամ, չնայած օրական 2, 3 անգամ վառելուն, տաքութիւնը երբէք 7 և, ամենաշատը, 9 աստիճանից չբարձրացաւ։

Այս բոլորից յետոյ պէտք է երևակայել արդէն մեր քաղաքի քաոսի բնութիւնը դրութիւնը։ Սակայն՝ պիտի զոհ լինել մեր քաղ. խորհրդից, որ նա, չարժուած մարդասիրական գութից, օգնութեան ձեռք մեկնեց դէպի քաղաքիս անօգնական բնակիչները։ Նախաձեռնութեամբ քաղաքագլխի օգնական պ. Աբեղոս Թամրազեանի իրաւասութեամբ վճռեցին մեանուագ քաղ. խորհրդից բաց Թողնել 500 ր. ի նպաստ չքաւորներին. բացի դրանից և մասնաւոր ստորագրութիւն բացուեց, այնպէս որ ընդամենը 800 րուբլի ժողովուեց, որ և իսկոյն բաժանուեց չքաւորներին։ Այս կողմից անշուշտ արժանի են գովեստի Թէ պ. Ա. Թանգեանը և Թէ իրաւասուները, որոնք, հասկանալով առաջինի գաղափարած հարցի բարոյական և կենսական նշանակութիւնը, ոչ միայն չը հակառակեցին նրան, այլ և արագութեամբ իրականացրին նրա բարի առաջարկութիւնը։ Քաղ. խորհուրդը որոշեց, որ այդ նպաստը տրուի ազգատներին ի յիշատակ Հոկտեմբերի 17-ին պատահած փորձանքից Օգոստափառ Ընտանիքի հրաշալի ապատութեան։

—

Մեր լրագրի աշխատակից Տմբլայի խաչանի Փէչլեեանցը մեծ ընդունելութիւն է գտել։ «Նոր-Դար»-ը սովորութիւն չունէ իւր աշխատակիցների անունները առանձին յիշելու և գրանց անունների վրայ կանխաւ հրաւիրելու ընթերցող հասարակութեան ուշադրութիւնը։ Բայց մեր ընթերցողներին կարող ենք վստահութեամբ յայտնելու, որ «Նոր-Դար»-ի աշխատակիցները կարօտ չեն բեկլամների և գրանք—երենց ստորագրութեամբ Թէ առանց անուն ստորագրելու, առաջիկայ տարին էլ աշխատակցելով մեզ, գործով ցոյց կը տան, որ մեր պարբերական հրատարակութեան ասպարիզում մտաւոր ոյժերը հայհոյանքով և բեկլամով ապրող մամուլի շուրջը չեն խմբուած։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեր մի այլ Թղթակիցը գրում է դեկտեմբերի 16-ին կայացած ներկայացման մասին.— Ուրբաթ, դեկտեմբերի 16-ին, կայացաւ հայ ուսանողների երեկոյթը։ Այս տարի ներկայացրին Հանգ. Տէր Գրիգորեանցի «Ես էլ քի մոցիքլուԹիւնը» և Գ. Սունդուկեանցի «Պէպօի» երկրորդ գործողութիւնը։ Ներկայացումից յետոյ սկսուեցան եւրոպական պարերը, որ շարունակուեցան մինչև առաւօտեան ժամի 3-ը։ Պարերգութեան մէջ պարերում դրուեցան երեք կենդանի պատկերներ Կովկասի բնութիւնից, ի մէջն այլոց մի կենդանի պատկերը ներկայացնում էր քրդերի բարբարոսութիւնը Թիւրքա-Հայաստանում։ Սրանցից յետոյ բեմի վրայ ներկայացուեց գիւղական հարսանիքի հանդէս, որը բաւական հետաքրքրութիւն շարժեց հանդիսականների մէջ։ Ցմոռանանք յիշել, որ հարսանեաց հանդիսի մէջտեղ բեմի վրայ նկուն և դայլայլ ներդաշնակութեամբ երկու հոգի, կին և տղամարդ, պարեցին Կովկասի տեղական պարերը։ Անկասկած, անխուսափելի էգզոտիկան առաջին տեղն էր բռնում։

Ներկայացումը մէջտեղ անցաւ խաղերի մէջ ընդհանրապէս նկատւում էր աւելի արուեստականութիւն քան բնական արտայայտութիւն, որի իսկ պատճառով ներկայացումը մի որոշ տպաւորութիւն չթողեց հանդիսական-

ԲՈՒԿՎՈՒՆԻՆ Ս. Տ. Վ. գրած է.—

«Ղոր-Վարդ»-ի Ա-ի 213-րդ եւ Ա-ի 218-րդ համարներուն մէջ «Ազգային մեկնաբանութիւն» առթիւ մի քանի խօսքեր ուզեմ ըսել։ Ես ոչ մէկ անգամ ինծի համար ուզած եմ պատասխանել, որովհետեւ կը տեսնէի, որ գրածներուս մէջ ոչինչ կայ, որ պատասխանի կարօտ ըլլայ։ Ուրիշներ ալ ինծի համար պատասխանած են։ Ես կարծեցի, որ ասոնք ալ պիտի լռեն, ինչպէս ես լռեցի։ Բայց տեսայ, որ ոչ միայն չեն լռեր, այլ եւ ինծի կը վերագրեն այնպիսի բաներ, որոնք ես երբեք չեմ ըսած եւ չեմ մտածած։ Ուստի ստիպուած եմ հրապարակ գալ, որպէսզի ընթերցողները չկարծեն, թէ ես ալ ասոնց կարծիքին եմ։ Ես ոչ միայն չեմ ըսած, որ «Ազգային մեկնաբանութիւն» մը պէտք է գրուի, այլ ընդհակառակն ըսած եմ, որ ժամանակ մը պէտք է անցնի, մինչեւ որ ազգային մեկնաբանութիւն մը գրուի։ Ես ըսած եմ, որ ազգային մեկնաբանութիւն մը գրելու համար պէտք է ունենալ ոչ միայն ընդհանուր գիտութիւններ, այլ եւ մասնաւոր գիտութիւններ, որոնք ես չունիմ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Բաժանում.

Չարչի Օհան

ՈՒԶամ ձեզ մի քիչ ուրախացնել, բայց ոչ այնքան, որ ձեր ուրախությունից ձեր աչքերը ջրվեն։ Ես ձեզ պատմելու եմ մի պատմություն, որ ինձ պատմեցին։ Ես էլ չգիտեմ, թե ճիշտ է, թե սուտ։ Ես ինձ համար ոչ մի հոգս չեմ անում, թե ճիշտ է, թե սուտ։ Ես ձեզ պատմում եմ, ինչպես որ ինձ պատմեցին։ Ես ինձ համար ոչ մի հոգս չեմ անում, թե ճիշտ է, թե սուտ։ Ես ձեզ պատմում եմ, ինչպես որ ինձ պատմեցին։

Այս, որ ձեզ ասում էի, բայց ասա՝ ես էլ ինչ եմ ասում... Ես ոչ մի բան չեմ ասում, ես ձեզ պատմում եմ, ինչպես որ ինձ պատմեցին։ Ես ինձ համար ոչ մի հոգս չեմ անում, թե ճիշտ է, թե սուտ։ Ես ձեզ պատմում եմ, ինչպես որ ինձ պատմեցին։

Ասում էին, թե մի ժամանակ մի մարդ կար, որ ուներ մի ագռավ։ Ագռավը ամեն օր գնում էր ճանապարհ, ուտելիք էր գտնում, ետ գալիս տուն, ուտում էր, քնում էր, ինչպես որ ամեն ագռավ անում է։ Մի օր էլ ագռավը գնում է ճանապարհ, ուտելիք է գտնում, ետ է գալիս տուն, ուտում է, քնում է, ինչպես որ ամեն ագռավ անում է։ Մի օր էլ ագռավը գնում է ճանապարհ, ուտելիք է գտնում, ետ է գալիս տուն, ուտում է, քնում է, ինչպես որ ամեն ագռավ անում է։

Ասում էին, թե մի ժամանակ մի մարդ կար, որ ուներ մի ագռավ։ Ագռավը ամեն օր գնում էր ճանապարհ, ուտելիք էր գտնում, ետ էր

նում այդ տեղերն... գանում է ցաւ, նեզուԹիւն, զրկանք, ապականուԹիւն, կեանքի կարճուԹիւն, բնատնեաց խանգարումն և անկումն մարմնով, անկումն հոգւով և բարւով. Թէ ինչ է չուտ (ինչ չուտ է լինում և ինչ արժան գնով) մի քանի հարիւր կամ հազար րուբլի... Յաւելի իրազուԹիւն։

Ութսունվում, հաստատ կարելի է ենԹադրել, որ բոլոր օտար երկրացի, հարաւային կողմերից գաղԹական հայերի Թիւն, այլ և կին, ծեր և երեխայ—ընդամենը կը լինի հազար հոգի։

Յ. Պ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՓՈՂԱՓԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ. — Վերջին ժամանակներս Պարսից կառավարուԹիւնը մեծ ջանք է ցոյց տալիս երկրի մէջ Հանապարհների հաղորդակցուԹեան մելոցները բարեկարգելու համար։ Սակայն գեռ ժողովուրդն այնքան անպատրաստ է, որ չէ կարողանում հասկանալ այդ և խոչընդոտները է հանում գեղեցիկ ձեռնարկուԹիւններէի առաջ։ «Правит. Вѣст.»-ում հրատարակուած է հետևեալ ԹղԹակցուԹիւնը. «Թհրան, 19 նոյեմբերի.— Հոկտեմբերի 21-ին, 8 վերստ երկարուԹիւն ունեցող երկաԹուղու գործի վրայ, որ Թհրանը միացնում է քաղաքից դուրս գտնուղ Շահ-Աբդուլ-Ազիմի մզկիԹի հետ, Թհրանից դուրս եկող գնացքը տակովն արեց մի մահմեդականի։ Պարսիկների խումբը, վրդովուելով այդ դէպքից, որ առաջինը չէ այդ Հանապարհի վրայ, յարձակուեց և կիսամեռ դրուԹեան հասցրեց մեքենագէտին և գնացքի ծառայողներին, ջարգեց-փշրեց Շահ-Աբդուլ-Ազիմի կայարանը և այլեց բոլոր չարժական երերը։ Բէլգիական ընկերուԹիւնը, որին պատկանում է այդ երկաԹուղին, պարսկական կառավարուԹեան յայտնեց, Թէ մինչև երկոց կրած վնասը ստանալը, որ 90,000 րուբլու է հասնում, նա դադարեցնելու է երկաԹուղային երԹեւեկուԹիւնը։ Պարսկական կառավարուԹիւնը նախ հրաժարուեց մ՛և է գումար վճարելուց, յենուելով, Թէ անկարգուԹիւնները երկաԹուղային վարչուԹեան ԹուլուԹիւնից է առաջացել։ Այդպիսի պատասխանի պատճառով, ընկերուԹիւնը իրաւ դադարեցրեց իր երԹևեկուԹիւնը և վերջ տուեց իր գործերին Պարսկաստանում։ Երկարատև բանակցուԹիւններից յետոյ, պարսկական կառավարուԹիւնը բէլգիական ընկերուԹեան որպէս վարձատրուԹիւն վճարեց 5,000 Թուման (մօտ 16 հազար րուբլի) և բացի այդ չնորհեց Թէհրանում լուցկի գործարան բանալու բացառական իրաւունք։ ԸնկերուԹիւնը գոհացաւ այդպիսի վարձատրուԹիւնից, ուստի և մի քանի օր սրանից առաջ երԹևեկուԹիւնը կրկին սկսուեց։ Թէհրանից ուղևորող առաջին գնացքով գնաց Շահի որդին՝ ալրինց Նասր-ՍուլԹանէն, պետական խորհրդի նախագահ Էմինէդ-Դօուլէն։ Հոկտեմբերի 21-ին անկարգուԹեան պատճառ եղողներին, մօտ 60 հոգի, հրապարակով ձաղկեցին։

ՓՈՂԱՓԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ. — Նոր տարու առԹիւ եւրոպական բոլոր վեհապետներն ու բարձրաստիճան անձերը մեմեանց շնորհաւորական գրուԹիւններ ուղարկելով, ակնարկում են և առաջնակարգ քաղաքական դրուԹեան մասին։ Այսպէս օրինակ, աւստրիական Ֆրանց-Յոզէֆ կայսրը շնորհաւորելով գերմանական վերհիվիմ կայսրին, յայտնում է իր վստահուԹիւնն ու հաւատը, որ առաջիկայ տարին կը պահպանուի եւրոպական խաղաղուԹիւնը։ Միևնոյն իմաստով է և իտալական Հումբերտ Թագաւորի շնորհաւորուԹիւնները։ Ռնգարական մինիստր-նախագահ Տիսսան յայտնում է, որ խաղաղուԹիւնը կը պահպանուի մինչև-եւրոպական գաղնակցուԹեան շնորհիւ, հակառակ ուրիշ պետուԹիւնների գաղնակցուԹեան, որոնք ոգևորուած են պատերազմի տենչով։ Սակայն չնայելով խաղաղասիրական այս ցանկուԹիւններին, միևս կողմից էլ չեն դադարում չարունակ զինուելու մասին լուրերը տարածուել։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գեղեցիկ արհեստ.—Սլաւոնական էրգիվիլ հասարակուԹեան մէջ գտել են մի ամբողջ խումբ, որ սիստեմատիկաբար պարապելիս է եղել ուրիշներին Թունաւորելու ամօԹալի արհեստով։ Նրանք երբեմն ծառայուԹիւն անում էին կանանց՝ երբեմն ամուսիններից ազատուելու համար, Թէև երբեմն ալակցուԹիւնը չէին խնայում և ուրիշ գործունեայ կանանց։ Ներքակալուած եօԹ Թունաւորող կանանց մասին եղած քննուԹիւնից երևում է, որ նրանք քան հոգի ուղարկել են միևս աշխարհքը։

***

ԽաղաղուԹեան դափնին.— Անցեալները գերմանական վերհիվիմ կայսրը այցելեց «Վուլկան» նաւաչարտարը. բանուորներն երեխ կայսրին մատուցին մի դափնեայ պսակ։ Կայսրը խնամ զգացուեց այդ բանից և ասաց. «Հոգով չափ չնորհակալ եմ «Վուլկան»ի բոլոր բանուորներից։ Այս առաջին դափնեայ պսակն է, որ ինձ մատուցանուում է, և ես չատ ուրախ եմ, որ սա խաղաղուԹեան դափնի է»։ Այս ասելով, կայսրը ուժով սեղմեց երեխ պսակ մատուցանող երկաԹագործի ձեռքը, որին բանուորներն որպէս պատասխան, ուրախական աղաղակներ բարձրացրին։

***

Անակնկալ անձնասպանուԹեան փորձեր.—Բուդապէշտում մի տասնեօԹ տարեկան տղայ՝ Ս.-ն սիրահարուել էր տասն չորս ամեայ օրիորդ Մ.-ի վրայ։ Երիտասարդ սիրահարներն չատ երկար Թուից մինչև պսակի օրը սպասելը, ուստի և նրանք վճռում են անձնասպանուԹեամբ վերջ տալ երեխ կեանքին։ Մի գիշերիկ օր նրանք գնում են Դանուբի ափը։ Առաջին անձնասպանուԹիւնը պէտք է Մ.-ն գործէր։ Մանկահասակ աղջիկն առանց երկար մտածելու լինքն երեխ ձգեց գետը։ Սակայն սառը ջուրն աւելի ազդեց նրա վրայ քան սիրոյ ներմուԹիւնը, ուստի առաջ դատողուԹիւնը կրկին սկսաւ գործել և Մ.-ն սկսաւ օգնուԹեան կանչել։ Նրա ազաղակի վրայ օգնուԹեան հասան մարդիկ և նրան ազատեցին հենց այն միջոցին, երբ պատանի Ս.-ն ատրճանակի երեք գնդակով փորձեց վերջ տալ իր կեանքին։ Բայց բարերաղդաբար ոչ մի գնդակ իր նշանակէտին չէ դիպչում, և Ս.-ն Թրջուած և սառած Մ.-ի հետ տարուեցաւ ոստիկանատուն, ուր չուտով եկան և նրանց ծնողները։

ՀՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Մոսկվա, պ. Զուբարևին.—Ստացանք ձեր նամակը, նոյնպէս և ձեր գրած «Մի գեղեր իմ կեանքից» հոգերանական փորձը։ ԹերԹիս կարմբագրի կողմից յատուկ չնորհակալուԹիւն ձեր այդ աշխատասիրուԹիւնը երեխ նուիրելու համար։ Նոյնպէս չնորհակալուԹիւն նամակի մէջ արտայայտած զգացումների համար։

Գ. Գ. Սուենդսկեանցը. ասում է, որ ձեր նամակին, Թէպէտև մի փոքր ուշ, պատասխանել է։ Երևի նամակը արդէն ստացած կը լինիք, մանաւանդ որ ապահովացրած է եղել։

—

Զհաբ, պ. Ց. Մ.-ին.—Այդ տեղի ուսումնարանին գլուխը նուիրելու մասին ձեր հրաւէրը տպուած է արդէն «Նոր-Դար»-ի յայտարարուԹեան բաժնում։ Դուք երևի յայտարարուԹիւնները վրայ ուշադրուԹիւն չէք գարձրել։

Խմբագիր-հրատարակիչ՝

ՍԱՆԴԱՐ ՍԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՈԳԵՒՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԵԱՆ համաձայն, ուրբաթ, ամսոյս 30-ի երեկոեան, ժամը 6-ին ս. Գայիանեան օրիորդական—ծխական գպրոցի դահլիճում լինելու է Մողնուոյ ս. Գէորգ եկեղեցւոյ երէցփոխանի ընտրուԹիւնը, ուստի իրաւունք է նրբա ծխականներին չնորհ բերել մասնակցելու ընտրուԹեանը։

1—1

VIN
DE PEPTONE PEPSIQUE
DE
PCNAPOTEAUT
aharmcien de 1-re classe
A PARIS
AUTORISÉ EN RUSSIE
Գարեգին առաջնակարգ դեղագործ
Պ. Շապօտօի հնարած
ՎԷՆ ԴԸ-ՊԷՊՏՕՆ ՊԷՊՏԻՔ
անուանեալ գինին
Ռուսաստանում ընդունուած.

Առանց ստամոքսը հոգնեցնելու սնուցանել հիւանդ կամ ապաքինեալ անձերը.

Ահա այս գժուարին խնդիրն է որ լուծից վերոյիշեալ համեմ գինին։ Այս դեղի յատկուԹիւնն է կազդուրել և սնուցանել ստամոքսն, լեարդի, աղիքների զանազան ախտերն, ինչպէս նաև գժուարամարսուԹեան, անախորժուԹեան, անարիւնուԹեան ենԹակայ եղող հիւանդները։ Սնուցանում և զօրացնում է նաև չաքարախտից, զանազան տենդից, Թանչքից (dysenterie) քաղցկեղից (cancer) և այլ տեսակ ուռուցքներից հիւծող և մաշուող հիւանդները։ Միով բանիւ այն ամեն պարագաներու մէջ, ուր անհրաժեշտ է սնուցանել մարդ հիւանդներն ու Թոքախտ ունեցողները և կազդուրիչ սնունդով վերանորոգել նրանց ոյժը, և որոնց համար ոչինչ օգուտ չեն տալիս զանազան տեսակ մսի հիւԹերն ու չրերը և հում միսը, Շապօտօի գինին միայն կարող է օգտակար լինել։ Այս գինին ծերերի և մանուկների համար սննդարար հիւԹերից ամենաընտիրն է և կաԹնատու կանանց կաԹն էլ առատացնում է։

Ծախւում է Պարիզ, Վիվիէն փողոց, № 8 և գլխաւոր դեղավաճառների մօտ։

(M) բ 30—14

Պօստային կառքերի երԹևեկուԹիւն ռազմավիրական Հանապարհի վրայ մինչև 1889 թ. մայիսի 15-ը։

ԹիֆլիսԷ կայարանից պ-ը կ-ը

Հինգ հոգուս տեղ ունեցող կարէտ՝—առաւօտեան 8 ժ., գիշերում է ՄէյԹի կայարանում. Վերադիմաց հասնում է միևս օրը երեկոյեան 8 ժամին։

Վեց հոգուս տեղ ունեցող օմնիբուսը՝—ցերեկուայ 4 ժ., առանց գիշերելու, Վլադիկաւկազ հասնում է միևս օրը երեկոյեան 7 ժ.

Վլադիկաւկազից պ-ը կ-ը

Հինգ հոգուս տեղ ունեցող կարէտը՝—առաւօտեան 8 ժ. գիշերում է ՄէյԹի կայարանում, Թիֆլիս հասնում է միևս օրը 8 ժ., Ճաշից յետոյ.

Վեց հոգուս տեղ ունեցող օմնիբուսը՝ — Ճաշից 30 վայրկեան անց, առանց գիշերելու. միևս օրը հասնում է Թիֆլիս երեկոյեան 9 ժ. 50 վ.

ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Տեղեկանալով, որ իմ որդի ԱՂԷՔՍԱՆԴՐԸ (ինքնակոչ Ալեսակ) Թիֆլիսում գիմում է ծանօԹներիս և բարեկամներիս իմ ու իմ սիւս եղբայրների անունով նիւԹական նպաստներ ստանալու, սրանով ՅԱՅՏՆՈՒՄ ԵՄ յարգելի ազգականներիս և ծանօԹներիս, որ Աղէքսանդրը՝ սկսած 1880 Թուից համարուելով անուղղելի, ներկայ Թուականի Մայիսից ՉՐԿՈՒԱԾ Է հայրենական ժառանգուԹիւնից ու ԱՐՏԱՔՍՈՒԱԾ ՏՆԻՑ, ուստի մեր բարեկամների նրան հասցրած օգնուԹիւնները ոչ միայն չեն կարող ի պատիւ մեր համարուել, այլ աւելի կը նպաստեն Աղէքսանդրի կորստեան անբարոյականուԹեան մէջ։

Մկրտիչ քահանայ Տէր Սարգսեան Պարզեանց։

Հին-Նախիջևան 4—1

ԼՈՑՄ ՏԵՍԱԻ

„ԵՐԱԽԱՅՐԻՔ“

ՀրատարակուԹեան վերջին՝ Չորրորդ Գիրքը—Գմեռը. գինն 50 կոպէկ է։ Վաճառւում է Թիֆլիսի «Կեդրոնական», «Կովկասեան» և միևս բոլոր գրավաճառանոցներում։ Յանկացողները նոյն տեղերում և հեղինակից կարող են ստանալ «ԵՐԱԽԱՅՐԻՔԻ» Ա.-ջին, Երկրորդ, Երրորդ (Գարուն, Ամառ, Աշուն) գրքերը, որոնց իւրաքանչիւրի գինը նոյնպէս 50 կոպէկ է։

Իմ հասցէն. Шуламеры (Черезъ Бѣлый Ключъ) *Аршаку Меграбяну.*

(ա.) 5—3 Արշակ Մեհրաբեան

ПОДПИСКА НА

„ТРУДЫ“

Кавказскаго Общества Сельскаго Хозяйства

1889 года,

выходящіе ежемѣсячно и посвященные нуждамъ кавказской сельскохозяйственной промышленности.

ПРИНИМАЕТСЯ ВЪ ТИФЛИСѢ.

въ канцеляріи Кавказскаго Общества Сельскаго Хозяйства, что на Варятинской улицѣ, въ Александровскомъ саду.

ПОДПИСНАЯ ЦѢНА ИЗДАНІЯ ЗА ГОДЪ—

ЧЕТЫРЕ руб.

съ пересылкою во всѣ города Россійской имперіи и доставкою на домъ,

Отдѣльные номера не продаются

Для напечатанія въ „Трудахъ“ принимаются сельскохозяйственныя объявленія по соглашенію съ бюро Общества. (Խ.) 3—2

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ՊՈՒՐՄ ԵԿԱԻ ՇԷՔՍՊԻՐԻ

„ԶՈՒԻՐ ՏԵՂԸ ՄԵԾ ԱՂՄՈՒԿ“

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ.

Գերմաներէնից Թարգմանեց Յովհաննէս Լալայեան.

ԴԻՆՆ Է 50 ԿՈՊ.

Վաճառւում է ա) «Կեդրոնական գրավաճառանոցում» և բ) Թարգմանչի մօտ. Հասցէն՝—И. Х. Лалаянъ, Общество Взаимнаго Кредита. Тифлисъ.

3—3

ԽԼՈՒԹԻՒՆ ՈՒ ԽՅՃՈՑ ԳԼԽԻ ՄԷՋ

Ինչպէս ազատուիլ մարդ այդ տկարութիւնից

Բացատրութիւնների մասին դիմել, ռուսերէն կամ ֆրանսերէն լեզուով գրած, Ի. Դ. Նիկոլսոնին 4 rue, Drouot. Պարիզ (Ֆրանսիա)

15—12

ԴԵՊՕ

Կ. Մ. ԾՐԵԴԷՐԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՏԱՆ

ՐՕԲԱԼՆԵՐ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԿՆԵՐ

ԾԱԽՈՒ ԵՒ ՎԱՐԶՈՎ

Ընդունում են քերել պոլու երաշխաւորութեամբ պրոպօրց — ընդերութիւնների պորթքէնների համեմատ.

Գօլովինսկի պրօսպէկտ, տուն № 8.

(ձր. 2) 50—3

Дозволено цензурою. Тифлисъ, 28-го Декабря 1888 г. Տպարան Կավկազ լրագրի գրատենեակի Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Читахова